ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6(76), 30 հուլիս, 2025թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼ Է ՄԱՆՈՒԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

2025թ. հուլիսի 10-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կառավարման խորհրդի հերթական նիստը: Օրակարգում ընդգրկված էր ռեկտորի ընտրության հարցը: Նշենք, որ դեռևս հունիսի 2-20-ը հայտարարված էր ռեկտորի ընտրության բաց մրցույթ, որին դիմել էր 3 թեկնածու, սակայն ներկայացել են երկուսը՝ Իրավաբանական գիտությունների թեկնածու, իրավաբանության դոցենտ Մանուկ Հովհաննեսի Մուրադյանը և տեխնիկական գիտությունների թեկնածու, երկրաբնապահպանության դոցենտ Լիանա Համլետի Խաչատրյանը:

Խորհուրդն ուսումնասիրեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի բաց մրցույթի հավակնորդների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ռեկտորի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար նախատեսված պահանջների համապատասխանության հարցը, լսեց ռեկտորի թափուր հաստիքի հավակնորդների կողմից Կրթահամալիրի զարգացման և բարեփոխման հայեցակարգի (հիմնադրույթների) ծրագրային ելույթները: Հավակնորդներին ուղղվեցին հարցեր:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կառավարման խորհրդի անդամների փակ գաղտնի քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ ձայնով «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտոր ընտրվեց իրավաբանական գիտությունների թեկնածու, իրավաբանության դոցենտ Մանուկ Հովհաննեսի Մուրադյանը:

Շնորհավորում ենք Կրթահամալիրի նորընտիր ռեկտոր Մանուկ Մուրադյանին և մաղթում մեծ հաջողություններ Կրթահամալիրի սաների կրթության և դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում:

ՀՈՒԼԻՍԸ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԻՍ Է

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում հուլիսը հիշվող ու հանդիսավոր արարողությունների ամիս է: ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարությունը՝ կրթահամալիրի ռեկտոր Մ.Մուրադյանի գլխավորությամբ, այս տարի մեկ սերունդ ևս ճանապարհեց՝ կյանքի նոր մարտահրավերներն ու նոր ուղին պատվով անցնելու հեռանկարներով:

Հուլիսի 11-ին հանդիսավոր կերպով հանձնվեցին Կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման «Կառավարում» մասնագիտության մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտների ավարտական դիպլոմները: Շրջանավարտներից 3-ն ստացան գերազանցության դիպլոմ:

Ոստիկանական ուսումնական ստորաբաժանման «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա վճարովի ուսուցման շրջանավարտների համար հուլիսի 18-ը դրոշմվեց տոնական օրերի ցանկում. այդ օրն իրականացավ նրանց հերթական երազանքներից մեկը՝ ամբարելով մասնագիտական և մարդկային բարձր արժեքները ճանաչելու և յուրացնելու կյանքի դասերը՝ նրանք հանդիսավոր կերպով ստացան սպասված դիպլոմները:

Քառասուն շրջանավարտներից ինը գերազանցության դիպլոմ ստացան: Նույն օրն ավարտական դիպլոմներ ցտացան Կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման «Կառավարում» և «Փրկարարական գործ» մասնագիտությունների բակալավրի առկա ուսուցման կրթական ծրագրով 2024-2025 ուսումնական տարվա շրջանավարտները: Նրանցից 4-ն ստացան գերազանցության դիպլոմ:

Հուլիսի 25-ին տեղի ունեցավ «Իրավագիտություն» մասնագիտության բակալավրիատի առկա անվճար ուսուցմամբ շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Շրջանավարտներից 3-ն արժանացան գերազանցության դիպլոմների, ինչը վկայում է նրանց բարձր պատասխանատվության, հետևողականության և մասնագիտական պատրաստվածության մասին:

Շրջանավարտների անունից հանդես գալով՝ Մելսիդա Ավետիսյանը, Անգելինա Հովհաննիսյանը երախտագիտության խոսք ուղղեցին Կրթահամալիրի ռեկտորին և ողջ պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ բարձր գնահատելով նրանց ցուցաբերած աջակցությունն ու մասնագիտական նվիրումն իրենց ուսման 4 տարիների ընթացքում, և նշեցին, որ ստացած գիտելիքները, փորձն ու արժեքներն ուղենիշ կդառնան իրենց ողջ մասնագիտական գործունեության ընթացքում:

ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր Մ.Մուրադյանը, շնորհավորելով շրջանավարտներին, հույս հայտնեց, որ նրանք իրենց գիտելիքները կներդնեն օրինականության ամրապնդման գործում, և հավելեց, որ չսահմանափակվեն ստացած գիտելիքներով ու համարձակ քայլերով շարժվեն առաջ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրն իր շրջանավարտներին մաղթում է բարի երթ և մասնագիտական մեծ վերելքներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Հուլիսի 15-ին ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ կարևոր իրադարձություն՝ ստորագրվեց համագործակցության հուշագիր, որը նախատեսում է համատեղ գործունեություն ՆԳՆ կրթահամալիրի ուսանողական խորհրդի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողական խորհրդի միջև:

Հուշագրի ստորագրման արարողությանը բացման խոսքով հանդես եկավ ՆԳՆ կրթահամալիրի ուսանողական խորհրդի նախագահ Գայանե Բաբաջանյանը, ով ողջունեց գործընկերներին և կարևորեց նման համագործակցության նշանակությունը: Բացման խոսք ասաց նաև Հայաստանում ֆրանսիական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Հակոբ Պետոյանը, ով վստահություն հայտնեց, որ այս համագործակցությունը կլինի արդյունավետ և երկու բուհերի ուսանողների համար կստեղծի նոր հնարավորություններ:

Կողմերը հույս հայտնեցին, որ համատեղ նախագծերը կնպաստեն նոր գաղափարների և նախագծերի իրականացմանը, որոնք օգտակար կլինեն թե՛ ուսանողական համայնքի, թե՛ երկկողմանի հարաբերությունների զարգացման համար:

Միջոցառման ավարտին հյուրերը շրջայց կատարեցին ՆԳՆ կրթահամալիրի տարածքում, ծանոթացան Կրթահամալիրի ուսումնական և մշակութային պայմաններին: Շրջայցի ընթացքում նրանք նաև այցելեցին ոստիկանության պատմության թանգարան: Հյուրերը հնարավորություն ունեցան ծանոթանալու, թե ինչպես է կազմակերպվում ուսուցումը, ինչպիսի պայմաններում է իրականացվում:

ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 17-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորմամբ արհեստագործական կրթական ծրագրով սովորողների «Ոստիկանության ծառայողի երդման» հանդիսավոր արարողությունը:

Հանդիսավոր արարողությանը մասնակցում էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարությունը՝ կրթահամալիրի ռեկտոր Մ.Մուրադյանի գլխավորությամբ:

Սովորողները ՀՀ եռագույն դրոշի ներքո հանդիսավոր կերպով երդվեցին հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին, անվերապահորեն ղեկավարվել օրենքներով, պաշտպանել հայրենիքը, պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, արդար և անկողմնակալ իրականացնել լիազորությունները, ազնիվ և բարեխիղճ կատարել ծառայողական պարտականությունները:

Կրթահամալիրի ռեկտոր Մ. Մուրադյանը, շնորհավորելով սովորողներին, հաջողություններ մաղթեց հետագա ծառայության մեջ, որից հետո հնչեց ՀՀ օրհներգը:

Արարողությունը եզրափակվեց սովորողների հանդիսավոր երթով:

ՄԿԾ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՓՈՐՁԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Օրերս «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամն առցանց եղանակով կազմակերպել էր քննարկում ՀՀ տարբեր բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր ՄԿԾ-ների բարելավման փորձերի քննարկման արդյունքում երկխոսություն ձևավորել բուհերի միջև՝ հաջողված փորձերը ներկայացնելու, տարածելու և բուհերի փոխհամագործակցությանը նպաստելու համար:

Առցանց աշխատաժողովին զեկույցներով հանդես եկան ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժնի պետ Տիգրան Խաչատրյանը և ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի՝ մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Աննա Կարապետյանը:

Հարցերի մեծ ծավալի և ակտիվության արդյունքում որոշում կայացվեց կազմակերպել շարունակական քննարկումներ, որոնք հնարավորություն կտան առավել մանրամասն անդրադառնալ բոլոր հարցերին և մասնակիցների մտահոգություններին, խթանել գիտելիքների ու փորձի արդյունավետ փոխանակումը: Այս քննարկումները նպատակ ունեն նոր գաղափարներ առաջադրելու, լուծումներ մշակելու, մասնագիտական համագործակցությունն ամրապնդելու և լավագույն փորձը տարածելու:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Է

«Սահմանադրություն» եզրույթը ծագում է լատիներեն “Constitution” բառից, որը թարգմանաբար նշանակում է «սահմանում եմ» կամ «կառուցվածք»: Այն ամբողջովին արտահայտում է Սահմանադրության էությունը՝ պետության կառուցվածքը, հիմնարար սկզբունքներն ու կարգավորող կանոնները:

Աշխարհում առաջին անգամ սահմանադրություն ընդունող երկիրն ԱՄՆ-ն էր (1787թ.)՝ դրանով սկիզբ դնելով ժամանակակից սահմանադրական իրավունքի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության ընդունումը պատմականորեն վճռորոշ փուլ եղավ պետության կայացման և իրավական համակարգի ձևավորման գործընթացում: Անկախության հռչակումից չորս տարի անց՝ 1995 թվականի հուլիսի 5-ին, Հայաստանում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե, որի արդյունքում ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը:

Սահմանադրությունը երկրի իրավական համակարգի սյունն է: ՀՀ Սահմանադրության ընդունմամբ ամրագրվեց Հայաստանի Հանրապետության պետական բնույթը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն: Այն հռչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, սահմանեց կառավարման ձևը՝ հիմնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա:

Սահմանադրության օրը՝ հուլիսի 5-ը, նշվում է որպես պետական տոն արդեն ավելի քան

երեք տասնամյակ: Այդ օրը հիշեցնում է մեր՝ որպես ազգ և պետություն, կարևոր ձեռքբերումների մասին և առիթ է դառնում վերհիշելու անցած ճանապարհը, գնահատելու սահմանադրականության արժեքը և պատրաստ լինելու ապագայի մարտահրավերներին:

Սահմանադրությունը ոչ միայն իրավական փաստաթուղթ է, այլև հասարակության և պետության համախմբման, վստահության և կայունության հիմք:

Այն ամրապնդում է պետության անկախությունը, քաղաքացիների ազատությունները և հանրային կյանքում օրինականության գերակայությունը:

Տաթևիկ Թորոսյան
ՓԾ և ՃԿ ուսումնական ստորաբաժանում, կառավարում բաժին, 2-րդ կուրս

ԿԱՅԱՑԱՎ ԱՄԵՆԱՄՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հուլիսի 7-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում առցանց ձևաչափով տեղի ունեցավ 10-րդ միջազգային գիտագործնական համաժողովը:

«Ընտանեկան բռնության դեմ պայքար. միտումներ, խնդիրներ և հեռանկարներ» խորագրով միջոցառմանը մասնակցում էին ՌԴ ներքին գործերի նախարարության գործընկեր բուհերի, Կրթահամալիրի, ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության, ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ներկայացուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական աշխատանքների և նորարարությունների գծով պրոռեկտոր Էմիլ Մարգարյանը: Մասնակցության համար շնորհակալություն հայտնելով ներկաներին՝ նա ընդգծեց թեմայի արդիականությունն ու կարևորությունը: Արդյունավետ ու կառուցողական աշխատանք մաղթելով մասնակիցներին՝ է. Մարգարյանը նաև մատնանշեց, որ համաժողովը բացառիկ հարթակ է ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի նորագույն մոտեցումները, իրավական մեխանիզմները քննարկելու, ինչպես նաև նոր գիտելիքներ ու գաղափարներ փոխանակելու համար:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՌԴ ՆԳՆ Կազանի իրավաբանական ինստիտուտի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սերգեյ Միրոնովը:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրից ելույթ ունեցան պրոռեկտոր է. Մարգարյանը և ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դավիթ Թումասյանը:

Համաժողովն անցավ ակտիվ քննարկումների մթնոլորտում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Հրատարակվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանման ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոնի ավագ դասախոս, մ.գ.թ. Մարիամ Առաքելյանի՝ «Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով» վերտառությամբ մենագրությունը:

Այն նախատեսված է իրավաբանական անգլերեն ուսումնասիրողների համար և միտված է զարգացնելու առցանց հարթակում օտարալեզու մասնագիտական գրականության ուսումնասիրության կարողությունները:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ IN SERVICE ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ

Սույն թվականի հունիսի 9-ին մեկնարկել էին ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայողների վերապատրաստման in service դասընթացները, որոնք ընդգրկելու են ինչպես Երևան քաղաքի և պարեկային ծառայության վարչականի, այնպես էլ բոլոր մարզերի ստորաբաժանումները:

Վերապատրաստման պարտադիր դասընթացները նախատեսվում է ավարտել սեպտեմբերի 27-ին, իսկ սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 25-ն իրականացվելու են կամընտրային դասընթացները՝ նախապես հայտագրված պարեկային ծառայողների կողմից ընտրված թեմաներով:

Պարեկային ծառայության մարզային ստորաբաժանումների ծառայության արդյունավետ կազմակերպման նկատառումներից ելնելով՝ այդ ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստումներն անցկացվում են մարզերում:

Սույն թվականի հունիսի 27-ին Դիլիջան քաղաքում մեկնարկել է պարեկային ծառայության Տավուշի և Գեղարքունիքի մարզերի ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստման դասընթացների առաջին փուլը, որը կիրականացվի մինչև հուլիսի 1-ը ներառյալ:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳՐԵՐ, ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ, ԸՆԴՈՒՆՎԵԼ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հունիսի 23-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 2025 թվականի 8-րդ նիստը: Օրակարգային առաջին հարցի քննարկման արդյունքում ուժը կորցրած ճանաչվեցին ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի 2019թ. մարտի 6-ի որոշմամբ հաստատված «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական հանդեսի «Խմբագրության կանոնադրությունը», «Հոդվածներին ներկայացվող պահանջների, գրախոսման և տպագրության կանոնակարգը», «Հրապարակումների էթիկան» և գիտական խորհրդում 2023թ. ապրիլի 28-ին հաստատված խմբագրական խորհրդի կազմը, քանի որ միասնական կրթահամալիրի ձևավորումից հետո նշված գիտական հանդեսի խմբագրական խորհուրդը և գիտական հոդվածներին ներկայացվող պահանջները փոփոխվել են և հաստատվել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի հրամանով:

Օրակարգի երկրորդ հարցի քննարկման արդյունքում հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտաժողովների, ամենամյա գիտական հետազոտությունների ամփոփման կազմակերպման և անցկացման կարգի» նախագիծը և ուժը կորցրած ճանաչվեց Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի գիտական խորհրդի՝ 2021 թվականի հոկտեմբերի 8-ին հաստատված կանոնակարգը: Հարկ է նշել, որ 2022 թվականի հունվարի 31-ին Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից հաստատվել էր կրթահամալիրի գիտաժողովների, ամենամյա գիտական հետազոտությունների ամփոփման կազմակերպման և անցկացման կարգ, որը վերանայված տարբերակով հաստատվեց սույն նիստի ընթացքում:

Օրակարգի երրորդ հարցի քննարկման արդյունքում հաստատվեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր-ժամանակացույցը, որով նախատեսվեցին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում իրականացվող բարելավման ուղղությունների միջոցառումները և դրանց պատասխանատուները:

Գիտական խորհրդի հաջորդող հարցերի քննարկման արդյունքում հաստատվեցին «Իրավագիտություն», «Կառավարում», «Հոգեբանություն» մասնագիտությունների մագիստրոսի կրթական ծրագրերի, «Իրավագիտություն», «Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում», «Կառավարում», «Տրանսպորտային համակարգեր» մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերի մասնագրերը և դրանց համապատասխան ուսումնական պլանները, տպագրության երաշխավորվեցին «Հաղորդակցման հոգեբանություն (ոստիկանության ծառայողների համար) և «Կրիմինալոգիա» ընդհանուր մասնագիտական ուսումնական ձեռնարկները և «Իրավաբանական անգլերեն մեդիատեքստերի ընթերցանությունը համացանցի միջոցով՝ մենագրությունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՆ

Օրերս Ստեփանավան համայնքում ամփոփվել է ԵՄ Կայուն էներգիայի շաբաթ-2025-ը: Անցկացված միջոցառումներին նախաձեռնողականություն ցուցաբերելու և ակտիվ մասնակցություն ունենալու համար նախաձեռնությանը մասնակցած հաստատությունների թվում համայնքի ղեկավարի շնորհակալագրով պարգևատրվել է նաև ՆԳՆ կրթահամալիրը:

Արդեն ավանդական դարձած ԵՄ Կայուն էներգիայի շաբաթը (EU Sustainable Energy Week) այս տարի անցկացվել է հունիսի 10-12-ը՝ «Արդար և մրցունակ կանաչ անցման խթանում» խորագրով: Ստեփանավան համայնքում կազմակերպված 12 թեմատիկ միջոցառումներից «Իրազեկ սերունդ՝ կայուն ապագա» խորագրով ուսուցողական աշխատաժողով-սեմինարն իրականացվել է Ստեփանավանի ՆԳՆ կրթահամալիրում՝ նպատակ ունենալով ուսանողներին գիտելիքներ փոխանցել էներգախնայողության վերաբերյալ, ձևավորել կայուն ապագայի գիտակցում և նպաստել բնության պահպանությանն ուղղված քայլերին:

Համայնքային զարգացման համատեքստում Կանաչ էներգիայի աղբյուրների, հատկապես՝ արևային էներգիայի, էներգախնայողության տեխնոլոգիաների կարևորությունն ընդգծելու, էկոլոգիայի պահպանման վերաբերյալ սեմինարի մասնակիցների պատկերացումները խորացնելու նպատակով «Ի՞նչ է էներգախնայողությունը, էներգաարդյունավետությունը և վերականգնվող էներգիան», «Էներգախնայողությունն ու էներգաարդյունավետությունը կենցաղում» և «Կայուն զարգացման հասկացությունը, խնդիրները և հիմնական սկզբունքները» թեմաներով դասախոսություններով հանդես են եկել «Աշխարհագրության», «Հասարակագիտության» և «Իրավունքի» դասախոսներ Ա.Ասլանյանն ու Ա.Հովհաննիսյանը:

«Էներգախնայողությունն ամենևին չի նշանակում էներգիա չօգտագործել» թեմաներով խմբային աշխատանքների արդյունքների ներկայացումն ուղեկցվել է բովանդակալից քննարկումներով: Մասնակիցները հնարավորություն են ունեցել ոչ միայն հարստացնելու իրենց գիտելիքները վերականգնվող էներգիայի, պատասխանատու սպառման և կայուն զարգացման ուղղություններով, այլև փոխանակվելու իրենց գաղափարներով ու կարծիքներով, իսկ բլից-հարցումների արդյունքներով հաղթող են ճանաչվել Ն. Ասրյանը, Ս. Այվազյանը, Ա. Պուլյաևան և Վ. Մկրտումյանը:

Կայուն էներգիայի շաբաթը համարվում է վերականգնվող էներգետիկային նվիրված ամենամասշտաբային միջոցառումը ԵՄ անդամ և գործընկեր երկրների շարքում: Այն ավանդաբար կազմակերպվող և բարձր վարկանիշ ունեցող գործողությունների շարք է, որի նպատակն է մարդկանց իրազեկումը կլիմայի փոփոխության, էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և հարմարվողականության վերաբերյալ:

ՑԱՆԿԱՑԱԾ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՍՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ ՀԱՃԱԽ ՓՈՔՐ, ԲԱՅՑ ԿԱՅՈՒՆ ՔԱՅԼԵՐՈՒՄ Է

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՓԾ ճկ ուսումնական ստորաբաժանման 2-րդ կուրսի սովորող Տաթևիկ Թորոսյանի հետ:

- Ինչպիսի՞ ն էր փոքրիկ Տաթևիկը... երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Փոքրիկ Տաթևը շատ չարաճճի էր, համառ էր ու միշտ սիրում էր հարազատների ուշադրության կենտրոնում լինել: Մինչ օրս այդպես է:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Ընդհանուր առմամբ շատ հետաքրքիր մանկություն եմ ունեցել: Ամենահիշվողը՝ երբ առաջին անգամ մանկապարտեզ էին տանում ծնողներս, չմնացի, քանի որ հայրիկս ուր գնում էր, նրա հետ գնում էի: Էդպես էլ չգնացի:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիներս շատ ակտիվ են ընթացել: Գրեթե միշտ մասնակցել եմ բոլոր միջոցառումներին: Չնայած ակտիվությանս՝ միշտ աշքի եմ ընկել հանգիստ պահվածքով:

- «Փոքրիկ իշխան». Անտուան դը Սենտ Էքզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Իմ ստեղծած մոլորակում բոլորը բարի են և հոգատար միմյանց նկատմամբ: Այնտեղ կա սեր, որը ցանկացած պարագայում միշտ առաջնային է: Առհասարակ ամեն ինչ պետք է սիրով անել: Դա որևէ գործում հաջողության հասնելու կարևոր պայմաններից մեկն է:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Իմ կարծիքով չկան վատ գրքեր: Ցանկացած գրքից ամեն մեկս վերցնում ենք այն, ինչ մեզ պետք է:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

- Կարդացածս գրքերով միշտ էլ տպավորվել եմ: Վերջինը Ջոջո Մոյեսի «Ես մինչ քեզ» գիրքն էր:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Այս շրջանում բոլոր երազանքներս հիմնականում կապված են կրթությանս հետ:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Երաժշտությունը, գիրքը, ֆիլմն ու սպորտը, բայց հիմնականում՝ երաժշտությունը, քանի որ ընթացքում շատ եմ լսում. այն նաև օգնում է կենտրոնանալ գործերի վրա:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Սովորում եմ նաև հեռակա ձևաչափով այլ բուհում, որոշեցի 2-րդ մասնագիտություն ընտրել: Արդյունքում՝ ընտրեցի այս բուհը և մասնագիտությունը:

- Ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Շատ հետաքրքիր է անցնում: Այստեղ ուսանողը միշտ զբաղված է, ինչն ավելի հետաքրքիր ու հիշվող է դարձնում:

- Մի քանի բառով նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Կրթահամալիրի սովորողը պետք է լինի պատասխանատու, կարողանա ճիշտ պահին ճիշտ որոշումներ կայացնել, կարևոր է նաև հանդուրժողականությունն և համբերատարությունը, քանի որ հետագայում հասարակության տարբեր շերտերի հետ է շփվելու. տարբեր բնավորություն, դաստիարակություն, գուցեև՝ հիվանդություն... Ամեն պարագայում պետք է կարողանա հավասարակշռությունը չկորցնել, որպեսզի չկորցնի նաև վստահությունը:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Ոստիկան:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Յուրաքանչյուրի հետ խոսելիս ընտրում եմ այնպիսի թեմա, որի շուրջ բոլորս հետաքրքրություն կունենանք:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Առաջ շարժվելը և նպատակներին հասնելը, չնայած՝ մի քիչ անհամբեր եմ:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Համառ, նպատակասլաց, հայրենասեր:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ինչի՞ց սկսել այսօր:

- Օրն սկսում ես ժամը...

- 8:00-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- Նա, ով լուսավորում է ուրիշների կյանքը, երբեք խավարում չի մնա:

- Սիրելի զբաղմունքդ:

- Սպորտ, երաժշտություն:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ցանկացած նպատակի հասնելու գաղտնիքը հաճախ փոքր, բայց կայուն քայլերում է:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Շնորհակալություն հարցազրույցի համար:

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

2022 թվականից իմ կյանքում սկսվել է մի նոր, կարևոր ու պատասխանատու փուլ: Մեծ հպարտությամբ և ոգևորությամբ եմ ասում, որ ընդունվել եմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետ: Չնայած որոշումը կայացվեց բավականին արագ՝ այն եղել է լիովին գիտակցված ու ներշնչված համոզմունքից, որ սա է այն ուղին, որով ցանկանում եմ գնալ: Այս ընտրությունը համարում եմ ինչպես իմ անձնական, այնպես էլ մասնագիտական կյանքի կարևորագույն քայլերից մեկը:

Անսպասելիորեն արագ կայացված որոշումը երբեք չեմ համարել պատահական: Ընդհակառակը՝ զգացել եմ, որ սա հենց այն ուղին է, որը համապատասխանում է իմ ներքին արժեքներին: Ու հենց այդ ընտրությունը ես համարում եմ իմ կյանքի պատվաբեր և պատասխանատու քայլերից մեկը: Ուսումս սկսել եմ մի կրթօջախում, որը ներկայումս նոր փուլ է ապրում իր պատմության մեջ, որը խորհրդանշում է կրթական համակարգի նոր որակ, զարգացման նոր մակարդակ և կրթության նկատմամբ նոր մոտեցում:

Ոստիկանության ակադեմիայում ուսանելն ինձ համար առաջին հերթին մեծ վստահություն է ապագայի հանդեպ: Սա այն կրթօջախն է, որտեղ ոչ միայն փոխանցվում են իրավական գիտելիքներ, այլև ձևավորվում է արժեհամակարգ, որը հիմնված է կարգապահության, նվիրվածության, սկզբունքայնության և հայրենիքին ծառայելու պատրաստակամության վրա:

Ուսման ընթացքում հնարավորություն ունեմ առնչվելու իրավապահ համակարգում մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի հետ, որոնցից սովորելը միաձուլակ բարձրացնում է պատասխանատվության զգացումը: Նրանց անձնական փորձը, տարիների աշխատանքն իրավապահ ոլորտում ու իրական գործերից ստացած գիտելիքներն այն բացառիկ արժեքն են, որ ակադեմիան առաջարկում է իր ուսանողներին:

Իրավագիտության ֆակուլտետն ինձ տալիս է վերլուծական մտածողություն զարգացնելու, օրինականության և արդարության խորքային արժեքները հասկանալու և իրավաբանի մասնագիտության բարդ, բայց կարևոր ուղուն պատրաստվելու հնարավորություն: Սա մի միջավայր է, որտեղ կրթությունը չի սահմանափակվում տեսականով, այլ ուղեկցվում է իրական կյանքի օրինակներով և գործնական մոտեցումներով:

Այս նոր ուղին համարում եմ պատվաբեր, քանի որ ես միանում եմ մի համակարգի, որը ծառայում է արդարությանը, և, միևնույն ժամանակ, այն պատասխանատու է, քանի որ պահանջում է հետևողականություն, բարձր արժեհամակարգ և մշտական պատրաստակամություն՝ լավագույնս ծառայելու հանուն հասարակության բարօրության:

Ես լի եմ պատրաստակամությամբ սովորելու, զարգանալու և ապագայում արժանապատվորեն կրելու իրավաբանի կոչումը՝ ի նպաստ հայրենիքի և հասարակության:

Բաբաջանյան Գայանե
Իրավագիտություն մասնագիտության
4-րդ կուրս

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ՄՏՔԻ ԵԼԵՎԷՋՆԵՐ

Անհանգստություն՝
փոթորկուն, անդեմ,
Մտքիս վրայով թռչում է,
անցնում:
Օրն էլ է անցնում նենգ
ժպիտներով,
Խավար մտքերով, կեղծ
հայացքներով:

Հանգստություն՝ մեղմ անձրևի պես
Թափվում է սրտիս վերքին ՎԵՐԵՎԻՑ,
Գուցե դադարեն խռով գիշերները,
Ու քամիները կլռեն մի պահ:

Անհանգստություն՝ ժամացույցի զարկ,
Եվ ամեն վայրկյան՝ նոր մարող ճրագ:
Սպասում եմ ես՝ ինչ է բերելու
Երազն այս դաժան և անմեկնաբան...

Հանգստություն՝ մոմի շողքից էլ թեթև,
Տանում է հեռուն, դեպի ներսից ՎԵՐ:
Լռության մեջ պարզ մի հնչյուն,
Արդարության պարզ մի ճիչ, բայց հիվանդ, վտիտ:

Անհանգստություն. դարձյալ կեղծ խոսքեր՝
Խավարի նման միտք մոլորեցնող,
Բայց հանգստություն՝ մոր սրտի նման
Միշտ պարզ ու զուլալ, մաքուր ու անկեղծ...

Մանուկ Մուրադյան
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Թշնամիների ընծաները կործանարար են:

Սոֆոկլես

***

Երբ գաճաճը բարձրանում է հսկայի ուսերին, նա սկսում է պարծենալ, թե մեծ է հսկայից:

Սուֆենբերգ

***

Բարձրագույն դատարանը խղճի դատարանն է:

Հյուգո

***

Եթե խոսքն օդի մեջ է, ուրեմն կշիռ չունի:

***

Անընդունակ մարդիկ ընդունակ են ամեն ինչի:

***

Պատիվը կորցնողն այլևս ոչինչ չունի կորցնելու:

***

Կույր դատավորից վատթար թշնամի չկա:

***

Հպարտ եղի՛ր, բայց ոչ գոռոզ. դատարկ մարդն է գոռոզանում:

Պարույր Սևակ

***

Հաճախ բարոյապես ապականված մարդիկ ուրիշների մեջ են որոնում այն ախտերը, որոնցով վարակված են իրենք:

***

Ինչպես առակը, այնպես էլ կյանքը գնահատվում է ոչ թե երկարությամբ, այլ բովանդակությամբ:

Սենեկա

***

Տեսնել անարդարությունը և լռել, նշանակում է անձամբ մասնակցել:

Ժ. Ռուսո

***

Հիմարներն ուշադրություն են դարձնում միայն մարդկանց վրիպումներին և չեն նկատում արժանիքները: Նրանք նման են այն ճանճերին, որոնք ջանում են նստել մարմնի միայն բորբոքված մասի վրա:

Աբուլ-Ֆարաշ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Երկրագնդի վրա ո՞ր վայրը չի պատկանում որևէ պետության:
2. Մարդկային պատմության ամենակործանարար համաճարակներից մեկը կոչվում է «Սև մահ»: Ո՞րն է նրա իսկական անունը:

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 29.07. 2025թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան